

փեալ, և թէպէտ պերճ զինամանձուն ձեր ակումբ իմաստնոց բոլորեալ, և ոչ յօտարաց լոկ 'ի զարմանս հանդիսացեալ և 'ի գովեստ հայ հանճարոյ, բանայր 'ի տեսիլ և առաջի ազգականաց ձերոց սիրելեաց, և որդեգորով որդեսէր ծնողաց, որ սրտիւք և մտօք 'ի ձեզ ակնկաւոյց 'ի սեմոց հայրենեաց' 'ի լուր ցանկալի վաստակոցդ հրճուել մնան :
Եւ քանի առաւելութիւն յայնժամ ձեզ 'ի խրախոյս, վաստակաւորացդ 'ի սփոփանս, ազգին 'ի յաճախել ակնկալութեան, 'ի յաջողութիւն ըզձից բարեսիրաց . և օրհնութեամբ անուանն Եւտուծոյ' 'ի կշտամբանս անուս և ախտաւոր մարդկանն :

Հ . Ա . ՃԱՄ .

Պարսից Շահին Արրահամու Մեղրամեանց տուած նոր պատռանունը :

Ի ԱԶԱԼԻՆՈՐ օրոգիւնիս մերթ ընդ մերթ առիթ ունեցեր է յուրախութիւն բովանդակ ազգին ծանուցանելու ան չնորհաբաշխութիւններն ու պատիւներն՝ որ մեր ազգին մէջէն ոմանք ունեցեր են իրենց սեպհական տէրութիւններէն . որոնք որչափ մէկ կողմանէ թագաւորաց ու անոնց պաշտօնէիցը երախտագիտութեանն ու առատաձեռնութեան ցոյց մը սեպուին, ուրիշ կողմանէ ալ առաւելապէս նոյն պատիւն ընդունողաց արդիւնքն ու արժանաւորութիւնը կը պայծառացընեն : Եւ անկներու տրուած պատիւները չէ թէ միայն իրենց յատուկ փառք մըն է, հապանակ բոլոր ազգին ալ պարծանք . որովհետեւ որչափ ազգերնուս մէջ շատնան այսպիսի բարձրաստիճան անձինք տէրութեանց պաշտօններու մէջ, այնչափ ալ ազգերնուս քաղաքականութեան ու աշխարհալարչական գործոց մէջ ունեցած յարմարութեանը ապացոյց կը սեպուին, որն որ ազգի մը զարգանալուն

գլխաւոր առիթներէն մէկն է : Եւ որովհետեւ աս պատիւներս հաւատարիմ ծառայութեանց ալ փոխարէն մի են, անոր համար կը յօւտանք որ տալու լուրերնիս ալ աւելի քաջալերութիւն և ուրախութիւն մը ըլլայ անոնց՝ որոնք արդէն տէրութեանց ծառայութեանց մէջ կը զբաղուին :

Սենք այսօրինակ ուրախութիւն մը ունեցանք աս մօտերս՝ երբ լեցինք, թէպէտ և ոչ, Պարսից Շահին սղահանցի Սեփուրմեանց Բարահամ աղային տուած խառն պատուանունը, որն որ միայն պարսից մեծամեծ իշխանաց ու կուսակալաց կը տրուի . աս պատուոյ առնունը, կ'ըսէ հրովարտակը, չէ թէ միայն Շահին կողմանէ Սեփուրմեանին Լոտրայի մէջ Պարսից դեսպանութեան առաջին քարտուղար և թարգման ըլլալով՝ բրած ծառայութեանցը արքայական բարեհաճութիւն մը պիտի սեպուի, հապանակ աս պատուով ետքէն ընելու ծառայութեանց քաջալերութիւն մը, որով ալ մեծագոյն շնորհաց ալ արժանաւոր ըլլայ Շահին մեծանձնութեանն :

Սեր ուրախութիւնը կրկնապատիկ եղաւ լեւելով՝ որ նոյն առիթ նաեւ Վրացիոյ Սուրատեան Սարգարանին վաղեմի աշակերտներէն Պարոն Սեփուրմեան Յովսէփին ալ՝ որ վերցիլէալ Սեփուրմեանին եղբորսրդին է, զորաց գնդապետութե պաշտօնն ու պատիւը տրուեր է : Եւ քանք տարակուսիր որ այս պատիւը յիշեալ Պարոն Սեփուրմեանին Սարգարանիս ընթացիցը մէջ ցուցած բարեկրօնութեան և ուսումնասիրութեանը մրցանակը եղած ըլլայ :